ԱՐՄԵՆ ՅՈԼԱԿԻ ՄԱՐՈՒՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
Հայկական հարցի և Հայոց
ցեղասպանության պատմության բաժնի
վարիչ գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր
mararmts@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1918 թ. սեպտեմբերին թուրքական բանակի հետ մեկտեղ Բաքվի հայերի կոտորածներն իրականացնելուց հետո արհեստածին Ադրբեջան պետության իշխանություններն իրենց հանցավոր քաղաքականության հիմնական թիրախը դարձրին Ղարաբաղի հայ բնակչությանը:

Ղարաբաղին ռազմավարական կարևոր նշանակություն էր տրվում ոչ միայն կովկասյան թաթարների, այլև տարածաշրջան ներխուժած թուրքական զորքերի կողմից, որովհետև այդ երկրամասը, ինչպես նաև Զանգեզուրն ու Նախիջևանը զավթելու դեպքում ցամաքային կապ կստեղծվեր Ադրբեջանի և Թուրքիայի միջև, և կդրվեին Մեծ Ադրբեջանի ստեղծման հիմքերը, որը դիտվում էր իբրև Մեծ Թուրանի ստեղծման կարևոր փուլերից մեկը:

Առաջին աշխարհամարտի ավարտին Այսրկովկասում ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակը մուսավաթական իշխանությունների մոտ հույսեր էր արթնացրել, որ թուրքերի գործուն աջակցությամբ և բրիտանական զորքերի հրամանատարության լուռ համաձայնությամբ հնարավոր կլինի Ղարաբաղի հայ բնակչությանը ոչնչացնելու միջոցով իրենց ենթարկել երկրամասը:

Ներկա հրապարակման նպատակը 1919-1920 թթ. Ղարաբաղում Ադրբեջանի իշխանությունների իրականացրած ցեղասպանական գործողությունների թուրքական հետքի համակողմանի քննությունն է ինչպես կոտորածների ծրագրավորման ու կազմակերպման, այնպես էլ դրանց զոհ դարձած խմբերի դիմադրության

կազմալուծման ձևերի ու մեթոդների համեմատական վերլուծության միջոցով: Այս առումով կարևոր է նաև Ղարաբաղում 1919-1920 թթ. տեղի ունեցած կոտորածներին անմիջականորեն մասնակցած թուրք գործիչների և նրանց հրահանգներն իրականացրած կովկասյան թաթարների ու քրդերի ողջ շրջանակի բացահայտումը:

Սեփական ծրագրերի իրագործման նպատակով 1919 թ. հունվարի 15-ին Ադրբեջանի իշխանություններն անգլիացիների համաձայնությամբ Ղարաբաղի գեներալ-նահանգապետ նշանակեցին Խոսրով-բեկ Սուլթանովին: Բայց Ղարաբաղի հայերի IV և V համագումարների որոշումներով Ղարաբաղը հռչակվել էր Հայաստանի անբաժան մաս, ուստիև նա չէր պատրաստվում ենթարկվելու Ադրբեջանի նշանակած գեներալ-նահանգապետին[1]: Մասնավորապես, Ղարաբաղի Ազգային խորհուրդը բրիտանական զորքերի հրամանատարությանն ուղղված՝ 1919 թ. մայիսի 30-ի գրության մեջ Սուլթանովի նշանակմանն իր անհամաձայնությունը հիմնավորում էր նրանով, որ վերջինս հայտնի է որպես թուրքական նախկին գործակալ և արդեն աչքի է ընկել իր հակահայկական տրամադրություններով[2]: Ավելին, նշվում էր, որ Սուլթանովը Բաքվի հայերի ջարդերի պատասխանատուներից մեկն է[3], քանզի նրա կողմից կազմավորված հրոսակախմբերը քաղաքը գրավելուց հետո ակտիվ մասնակցություն են ունեցել հայ բնակչության զանգվածային կոտորածներին[4]:

Հատկանշական է, որ բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնը նույնպես Սուլթանովին թուրքամետ գործիչ և պանիսլամիստ էր համարում, սակայն միաժամանակ նշում էր, որ իրենց հսկողության տակ նա արդյունավետ կաշխատի և կարգուկանոն կհաստատի Ղարաբաղում[5]:

Մեծ Եղեռնի և Ղարաբաղի ու մասնավորապես Շուշիի հայ բնակչության կոտորածների նախնական համեմատությունն անգամ թույլ է տալիս պնդել, որ երիտթուրքերի հետ սերտ կապեր ունեցող մուսավաթական իշխանությունները և անձամբ Սուլթանովը ամբողջությամբ փոխառել էին հայերին բնաջնջելու երիտթուրքական փորձը: Եվ ինչպես վկայում են փաստերը, Ղարաբաղում ու մասնավորապես Շուշիում նրանք ձգտում էին գրեթե նույնությամբ կրկնել Մեծ եղեռնին նախորդած նախապատրաստական գործողությունները, ինչպես նաև այդ հանցագործության փուլերը՝ նույն հաջորդականությամբ ու մեթոդներով:

Ղարաբաղի գեներալ-նահանգապետի պաշտոնում նշանակվելուց հետո Սուլթանովը մի կողմից ձգտում էր անգլիացիների աջակցությամբ բանտարկել կամ Ղարաբաղից հեռացնել հայ մտավորականներին և հեղինակավոր գործիչներին, իսկ մյուս կողմից՝ նյութական օգնություն տրամադրել չքավոր հայերի այն հատվածին, որը պատրաստ էր ընդունելու Ադրբեջանի գերիշխանությունը[6]: Զանգվածային կոտորածներից առաջ հայ բնակչության ուշադրությունը շեղելու և նրա

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг.: сборник документов и материалов, под редакцией В. А. Микаеляна, 1992, Ер., 1992, док. № 49 с. 79, док. № 109, с. 167.
[2] Նույն տեղում, док. № 145, с. 227.
[3] Նույն տեղում, док. 71, с. 109.
[4] «Кавказское слово», Тифлис, 1919, 21 марта.
[5] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 86, с. 140.
[6] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 56, с. 90.

զգոնությունը բթացնելու այս հնարքները, որոնց դրսևորումներից էր նաև սոցիալական տարբեր խմբերին պատկանող հայերին միմյանց դեմ տրամադրելը, ցեղասպանությունից առաջ կիրառել էին նաև երիտթուրքերը[1]: Նման գործողություններով երիտթուրքերի վարչակարգը Օսմանյան կայսրությունում, իսկ մուսավաթական իշխանությունները՝ Ղարաբաղում փորձում էին պառակտել հայ բնակչությանը՝ զանգվածային կոտորածների ժամանակ վերջինիս զրկելով ինքնակազմակերպվելու և ինքնապաշտպանվելու հնարավորությունից:

Շուշիի անհնազանդ հայ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու առաջին փորձը Սուլթանովը կատարեց դեռ 1919 թ. ամռանը: Բրիտանացիների հավաստիացումներին հակառակ՝ գեներալ-նահանգապետի կարգադրությամբ հունիսի սկզբին քաղաքի գանձարանը և հեռագրատունը Շուշիի հայկական մասից տեղափոխվեց թուրքական մաս, ինչը լրջորեն անհանգստացրեց քաղաքի հայ բնակչությանը[2]: Սուլթանովն այս նախապատրաստական քայլերով Շուշիի հայերին զրկում էր ինչպես ֆինանսական միջոցներից, այնպես էլ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու ուղիներից՝ փակելով նաև Շուշիից դեպի Գորիս տանող ճանապարհը[3]:

Քրդական ծագումը[4] Սուլթանովին հնարավորություն տվեց իր եղբոր՝ Սուլթան-բեկ Սուլթանովի և հորեղբորորդու՝ Չինգիզ Յըլդրըմի[5] հրամանատարությամբ կարճ ժամանակում կազմավորել քուրդ-թաթարական ոչ կանոնավոր հրոսակախմբեր[6]: Ինչպես հայտնի է, Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ընթացքում թուրքական վարչակարգերն ակտիվորեն ներգրավում էին նաև քրդական հրոսակախմբերին[7]: Պատահական չէ, որ Շուշիի հայերին կոտորելու հարցում Սուլթանովը, օգտվելով թուրքական փորձից, նույնպես ապավինեց իր ցեղակիցների օժանդակությանը, երբ 1919 թ. հունիսի 2-ին Շուշիի թուրքական թաղամաս մտցրեց շուրջ երեքհազարանոց քրդական հրոսակախումբը և 1500 թաթար զինվորների[8]:

Նախապատրաստական քայլերից հետո՝ հունիսի 4-ի առավոտյան, Սուլթա-

---

[1] Տես Авакян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, Е., 1999, с. 17.

[2] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 151, с. 235.

[3] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:

[4] Шахвердиев А., Азербайджанские курды, Международный Азербайджанский Журнал «Наследие», № 1 (43), 2010, с. 41.

[5] Չինգիզի իսկական ազգանունը Սուլթանով էր, սակայն նա ներկայանում էր որպես Յըլդրըմ, ինչն էլ արձանագրվել է նրա փաստաթղթերում:

[6] Walker Ch., Armenia and Karabagh: The Struggle for Unity, Minority Rights Group Publications, 1991, p. 80.

[7] Ինչպես հայտնի է, դեռևս 1891 թ. սուլթան Աբդուլ Համիդի կողմից քրդերից կազմավորած «համիդիե» հատուկ գնդերը 1894-1896 թթ. Արևմտյան Հայաստանում իրականացրին հայ բնակչության դաժան կոտորածը: (Տես Սպիրով Դ.Ա., Հայերի սարսափելի կոտորածները (1894–1896 թթ.), Եր., 1997, էջ 38-41:) Առաջին աշխարհամարտի նախօրյակին էլ հայերի բռնի տեղահանության ու բնաջնջման գործընթացը համակարգելու նպատակով երիտթուրքերի ստեղծած «Հատուկ կազմակերպություն»-ը («Թեշքիլաթ-ը մահսուսա») կարճ ժամանակում համալրվեց բանտերից ազատ արձակված հանցագործներով և քրդերով՝ կառույցի անդամների թիվը հասցնելով 30.000-ի: (Տես Авакян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, с. 28.) Մեծ եղեռնի ընթացքում քրդական հրոսակախմբերը ոչ միայն զբաղված էին Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից Միջագետքի անապատներ բռնի տեղահանվող հայերի վրա հարձակումներով ու կոտորելով, (Տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 138, թ. 1) , այլև «մահվան քարավաններից» գեղեցիկ հայ կանանց ու աղջիկներին առևանգելով ու հայերի ունեցվածքը թալանելով: (Տես Վան-Վասպուրականի հերոսամարտը - 75 (նյութերի ժողովածու), կազմող Հ. Դ. Փափազյան, Եր., 1990, էջ 66:)

[8] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:

նովի հրամանով սկսվեց Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը, ինչից հետո ներխուժեցին թաթար զինվորները և քրդական հրոսակախումբը, սոսկալի ավերածություններ կատարեցին, ու մի քանի տասնյակ հայեր սպանվեցին[1]: Հունիսի 5-ի գիշերը գեներալ-նահանգապետի եղբոր՝ Ս. Սուլթանովի գլխավորած 600 հոգանոց քրդական հրոսակախումբը հարձակվեց Շուշիից ոչ հեռու գտնվող Ղայբալիշեն գյուղի վրա, և 70 տուն ունեցող բնակավայրը մեկ օրվա ընթացքում մոխրակույտի վերածվեց, տներն ու եկեղեցին ավերվեցին, ավելի քան 500 հոգի, որոնց մեծ մասը երեխաներ, կանայք ու ծերեր էին, սրի քաշվեցին[2]:

1919 թ. հունիսյան կոտորածների փաստերի վրա հիմնվելով՝ բրիտանական զորքերի հրամանատարության ներկայացուցիչ գնդապետ Քլատերբերգն իր զեկուցագրում պահանջում էր քրեական պատասխանատվության ենթարկել գեներալ-նահանգապետ Խ. Սուլթանովին[3]: Սակայն բրիտանական հրամանատարությունը բավարարվեց միայն նրան Ղարաբաղից հեռացնելով և Հայաստանի կառավարությանը հավաստիացնելով, որ վճռական քայլեր կձեռնարկի Ղարաբաղի հայերի կյանքի և ունեցվածքի անվտանգության ապահովման ուղղությամբ[4]:

Շուշիի և շրջակա գյուղերի հայ բնակչության 1919 թ. հունիսյան կոտորածների փուլը ապագա աղետի նախերգանքն էր, ճիշտ այնպես, ինչպես 1909 թ. ապրիլին տեղի ունեցած՝ Ադանայի և Կիլիկիայի հայերի կոտորածները երիտթուրքերի համար կայսրության ամբողջ հայ բնակչության նկատմամբ ավելի մասշտաբային հանցագործությունից՝ Մեծ Եղեռնից առաջ ուժերի յուրատեսակ փարձարկում էր:

Այս դեպքերից ընդամենը մեկ ամիս անց անգլիական զորքերը հեռացան Ղարաբաղից, իսկ Սուլթանովը վերադարձավ իր նախկին դիրքին: 1919 թ. օգոստոսի 12-ին Ղարաբաղից հեռացավ «Ամերիկյան օգնության կոմիտե»-ի առաքելությունը, իսկ 13-ին՝ բրիտանական զորքերը, ինչից անմիջապես հետո Սուլթանովի հրամանով նախ՝ փակվեց Շուշի – Եվլախ ճանապարհը, իսկ հետո հրետանին ուղղվեց Շուշիի հայկական թաղամասի և Շոշ գյուղի վրա, որտեղ օգոստոսի 12-ին գումարվել էր Ղարաբաղի հայերի VII համագումարը: Սուլթանովը համագումարին վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով 48 ժամում ընդունել Բաքվում մշակված համաձայնագրի կետերը և Ղարաբաղը ժամանակավորապես ճանաչել Ադրբեջանի կազմում[5]:

Ստեղծված ծանր պայմաններում 1919 թ. օգոստոսի 22-ին Ղարաբաղի հայերի VII համագումարի և Ադրբեջանի կառավարության միջև կնքված ժամանակավոր համաձայնագրի 2-րդ հոդվածով Ղարաբաղը ժամանակավորապես ընդգրկվում էր Ադրբեջանի Հանրապետության կազմում[6]: Ակնհայտ է, որ այս պայմանագրի կնքումը չի եղել Ղարաբաղի հայերի VII համագումարի ազատ կամքի արտահայտությունը, այլ ստորագրվել է ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի պայմաններում:

[1] Հարությունյան Հ., Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ), «Բանբեր Հայագիտության», № 1. Եր., 2015 թ. էջ 53:
[2] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 155, с. 241.
[3] «Кавказское слово», Тифлис,1 июля 1919.
[4] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 213, с. 322.
[5] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 216, с. 331.
[6] Նույն տեղում, док. 214, с. 324.

Փարիզի խաղաղության վեհաժողովին ուղղված՝ Հայաստանի Հանրապետության հուշագրում հստակ արձանագրվում էր, որ ադրբեջանական զորքերի և հրոսակախմբերի կողմից մի շարք հայկական բնակավայրերում կազմակերպված կոտորածներից, հարյուրավոր կանանց և աղջիկների բռնաբարություններից հետո թնդանոթների առջև անպաշտպան մնացած և Անգլիայի օգնությունից զրկված Ղարաբաղը հարկադրված կնքեց ժամանակավոր զինադադար՝ հանուն հայ բնակչության ֆիզիկական գոյության պահպանման՝ արձանագրելով, որ իրենց իրավունքների վերջնական հստակեցումը պետք է կատարվի Խաղաղության վեհաժողովի կողմից[1]: Միջազգային պայմանագրային իրավունքի տեսանկյունից Ղարաբաղի հայերի VII համագումարին Ադրբեջանի պարտադրած համաձայնագիրը անօրինական էր, քանզի «Միջազգային պայմանագրի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն՝ ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի պայմաններում ստորագրված պայմանագրերն առ ոչինչ են[2]:

Փարիզի խաղաղության վեհաժողովին ուղղված՝ ՀՀ վարչապետ Ա. Խատիսյանի 1919 թ. օգոստոսի 28-ի հայտարարության մեջ բացահայտվում էր Ադրբեջանի կողմից Ղարաբաղի հայերին պարտադրված պայմանների քաղաքական ենթատեքստը՝ նշելով, որ ժամանակավոր համաձայնագրի ստորագրումը Ադրբեջանի կողմից Ղարաբաղի նվաճման համաթուրքական նկրտումների իրագործմանը միտված քայլ է, որով փորձ է արվում Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին ենթարկելու միջոցով միանալ Թուրքիային և Հյուսիսային Պարսկաստանին և ստեղծել թյուրքական միասնական տարածք՝ Արևելյան Հայաստանը կտրելով Արևմտյան Հայաստանից և ձախողելով միացյալ Հայաստանի ստեղծումը[3]:

Հասկանալի էր նաև, որ Ադրբեջանը ժամանակավոր համաձայնագրի պայմաններով չի բավարարվելու, քանզի այն դիտարկում էր սոսկ որպես Ղարաբաղն իրեն ենթարկելու առաջին քայլ և հետագայում փորձելու է ժամանակավոր ենթարկումը դարձնել վերջնական: Այս մասին է վկայում նաև հետևյալ հատկանշական փաստը: Բարձր գնահատելով Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու գործում Սուլթանովի ջանքերը՝ նրան առաջարկվում է Ադրբեջանի ներքին գործերի նախարարի պաշտոնը, որին ենթարկվում էր նաև Ղարաբաղի գեներալ-նահանգապետը, սակայն վերջինս 1919 թ. սեպտեմբերի 2-ի պատասխան նամակում Ղարաբաղից իր հեռանալը տվյալ պահին անթույլատրելի էր համարում՝ գտնելով, որ պետք է զարգացնել ձեռք բերված հաջողությունը և Ադրբեջանի իշխանությունը տարածել նաև Զանգեզուրի վրա, ինչից հետո, նրա կարծիքով, հնարավոր կլիներ լուծել նաև հարավարևմտյան Ադրբեջանի հարցը[4]: Այսպիսով՝ Սուլթանովը անթաքույց ակնարկում էր, որ Ղարաբաղի և Զանգեզուրի՝ Ադրբեջանին միացնելը պայմաններ կստեղծի Հյուսիսային Իրանի՝ Ատրպատականի տարածաշրջանի նկատմամբ հավակնություններ ցուցաբերելու համար:

Ժամանակավոր համաձայնագրի ստորագրումից հետո՝ 1919 թ. սեպտեմբերի 7-ին, Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետը Ղարաբաղն իրենց իշ-

[1] Նույն տեղում, դոկ. 219, с. 337.
[2] Международное право в документах, сост. сборника Н. Т. Блатова, М., изд. Юрид. лит., 1982, с. 86.
[3] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 217, с. 334.
[4] Նույն տեղում, դոկ. 220, с. 338.

խանության տակ պահելու նպատակով Սուլթանովին կարգադրում է քրդերից նոր հեծյալ և հետևակային զինված ստորաբաժանումներ կազմավորել[1]: Այդ գործում արդեն բավականաչափ փորձառություն ունեցող Սուլթանովը քրդական նոր հրաձգային գումարտակ և հեծելազորային դիվիզիա է կազմավորում[2]:

1920 թ. սկզբին մուսավաթական Ադրբեջանը ձեռնամուխ եղավ ուժային մեթոդով Ղարաբաղն իրեն վերջնականապես ենթարկելու ծրագրի իրագործմանը, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու էր հայ բնակչության զանգվածային կոտորածներին:

1920 թ. հունվարի վերջին թուրքական բանակի երկու բարձրաստիճան սպաների՝ Նուրի[3] և Խալիլ[4] փաշաների ժամանումը Շուշի ակտիվացրեց հայերի դեմ ծրագրվող ապագա գործողությունների նախապատրաստական աշխատանքները[5]: Մարտի սկզբին նրանց միացավ նաև Քյազիմ բեյը՝ 10 թուրք սպաների հետ, ինչը լուրջ անհանգստություն առաջացրեց հայ բնակչության շրջանում[6]:

Սուլթանովը փորձում էր փարատել հայերի կասկածները և բարձրաստիճան թուրք սպաներին ներկայացնում էր որպես ռազմական խորհրդատուներ: Ըստ ամենայնի, հենց այդ թուրք սպաների խորհրդով ամրացվեցին Շուշին և Խանքենդի ավանը, նրանց անմիջական ղեկավարությամբ Ղարաբաղի շուրջ կենտրոնացած ավելի քան 10 հազարի հասնող թաթարական զորքերն ու քրդական զինված հրոսակախմբերը վերադասավորվեցին այնպես, որ հսկողության տակ առնվեցին ռազմավարական կարևոր դիրքերը, և դադարեցվեց հաղորդակցությունը Ղարաբաղի և Զանգեզուրի միջև[7]:

Ժամանակակից ցեղասպանագիտության մեջ որպես տվյալ հանցագործության նախապատրաստման պարտադիր նախապայման նշվում է վիկտիմիզացիայի գործընթացը[8], որը կիրառվել է ինչպես 1894-1896 թթ. հայերի կոտորածներից առաջ[9], այնպես էլ երիտթուրքերի վարչակարգի կողմից՝ հայերին մեղադրելով

---

[1] Նույն տեղում, док. 221, с. 340.

[2] Нагорный Карабах в 1918-1923 гг.,, док. 248, с. 372.

[3] Այսրկովկասում թուրքական զորքերի հրամանատար Նուրի փաշան Բաքվի գրավումից առաջ երաշխավորել էր խաղաղ բնակչության կյանքի ու գույքի անվտանգությունը, սակայն քաղաքը գրավելուց հետո նրա թողտվությամբ թուրքական զորքերը և թաթարական հրոսակախմբերը 1918 թ. սեպտեմբերի 15-17-ին իրականացրին տասնյակ հազարավոր հայերի կոտորածը և թալանեցին նրանց ունեցվածքը: (Տես Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը, Եր., 2011, էջ 399-400:)

[4] Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվեր փաշայի հորեղբայր Խալիլ փաշան 1914 թ. եղել է «Հատուկ կազմակերպության» («Թեշքիլաթ-ը մահսուսայի») հիմնադիրներից մեկը: Լինելով «Մեծ Թուրան» երևակայական պետության ստեղծման գաղափարի ջատագով՝ Խալիլն ամեն կերպ փորձում էր դրա կենսագործման մեջ ներգրավել Ադրբեջանի մուսավաթական իշխանություններին:

[5] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 254, с. 376.

[6] Նույն տեղում, док. 94, с. 151.

[7] Տես Հարությունյան Հ., Շուշիի հայության կոտորածները, էջ 58-60:

[8] «Վիկտիմիզացիան» կամ «զոհաբերման» գործընթացը նախորդում է ցեղասպանության հանցագործությանը, որի ընթացքում հանցավոր վարչակարգը նախապես թիրախավորում է պոտենցիալ զոհին՝ որոշակի էթնիկ, կրոնական կամ ազգային խմբին՝ քարոզչական միջոցներով վերջինիս ներկայացնելով իբրև չարիք, սպառնալիք և հասարակությանն աստիճանաբար հանգեցնելով տվյալ խումբը ոչնչացնելու անխուսափելիության և նույնիսկ անհրաժեշտության մտքին: (Տես Harf B., Rescuing Endangered Peoples: Missed Opportunities, Social Research. An International Quarterly of the Social Sciences, N.Y., Spring, 1995, p. 24.) Բնական է, որ եթե թիրախավորվում է զոհ խումբը, ուրեմն՝ պետք է նախանշվի նաև ապագա դահիճը, որի դերում հանդես է գալու տվյալ հասարակության մեկ այլ էթնիկ կամ կրոնական խումբ՝ ակտիվորեն մասնակցելով զոհ խմբի ոչնչացման գործընթացին և դառնալով իշխանությունների հանցակիցը: (Տես Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտական հայեցակարգային համակարգում, Եր., 2002, էջ 18:)

[9] 1894-1896 թթ.՝ Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածների նախապատրաստական

Օսմանյան կայսրության բոլոր դժբախտությունների մեջ[1]: Ուստի պատահական չէր, որ Շուշիի հայերի ջարդերից առաջ մուսավաթական իշխանությունների գործակալները Ղարաբաղում ժողովներ էին հրավիրում ու գրգռիչ ճառերով մուսուլման բնակչությանը տրամադրում հայերի դեմ: Նովրուզ բայրամը տոնելու անվան տակ Ղարաբաղի տարբեր շրջաններից Շուշի էին բերվել հազարավոր մուսուլմաններ, որոնց Սուլթանովը հրահանգեց պատրաստ լինել և սպասել իր ազդանշանին՝ քաղաքի հայկական մասը հիմնահատակ կործանելու համար[2]:

Ղարաբաղի հայ բնակչության դեմ վճռական գործողությունների դիմելու համար մուսավաթական իշխանություններին միայն հարմար առիթ էր հարկավոր: Այդ պատճառով լուրեր տարածելով, թե իբր հայկական մի ջոկատ Շուշի է թափանցել[3], Սուլթանովը փաստորեն առաջնորդվում էր ցեղասպանության սկզբնական փուլում երիտթուրքերի կողմից շրջանառված «հայերի ապստամբություն բարձրացնելու» կեղծ վարկածով, որը Հայոց ցեղասպանության ժխտման և նենգափոխման թուրքական «հայեցակարգի» անկյունաքարն է կազմում[4]:

Շուշիի կոտորածները «հայերի ապստամբությունը» ճնշելու շինծու վարկածով հետագայում փորձեց արդարացնել նաև Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ֆ. Խան-Խոյսկին՝[5] նշելով, թե իբր դեպքերի նախօրյակին հայկական երկու զինված խումբ՝ յուրաքանչյուրը 26 մարդուց բաղկացած, մտել է Շուշի, միացել այնտեղ եղած զինված մարդկանց և հարձակվել ադրբեջանական զորքերի վրա[6]: Ակնհայտ է, որ հետևելով Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային, Սուլթանովն ու Խան-Խոյսկին «ապստամբություն բարձրացնելու» շինծու մեղադրանքներով ձգտում էին արդարացնել հայ բնակչության դեմ իրականացվելիք զանգվածային կոտորածները և դրանց պատասխանատվութ-

---

շրջանում, Աբդուլ Համիդը համաիսլամականությունը որպես միջոց օգտագործում էր մուսուլման թուրքերին ու քրդերին քրիստոնյա հայերի դեմ գրգռելու համար: Հայերի դեմ քարոզչությունն իրականացվում էր իսլամական եղբայրությունների ղեկավարների՝ շեյխերի և մոլլաների միջոցով, որոնք շրջում էին երկրով մեկ և թուրքերին ու քրդերին գրգռում «գյավուր» հայերի դեմ: Կայսրության հայ բնակչությունը նրանց կողմից ներկայացվում էր որպես Օսմանյան կայսրությանը թշնամի քրիստոնյա աշխարհի սպասարկու, որը ենթակա է ոչնչացման: (Տես Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, էջ 163-165:)

[1] Տես Марукян А., Проблема геноцида армян в современной геноцидологии, Ер., 2010, с. 43.

[2] Հարությունյան Հ., Շուշիի հայության կոտորածները, էջ 60:

[3] «Հառաջ», Թիֆլիս, 26 փետրվարի 1920:

[4] Առաջին աշխարհամարտի սկսվելուց կարճ ժամանակ անց Օսմանյան կայսրությունում տարածվեց Թալեաթ փաշայի կողմից առաջ քաշված «հայկական կոմիտեների զինված ապստամբության» գաղափարը, ինչին էլ իբր թե օսմանյան իշխանությունները փորձել են հակազդել: (Տես Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Եր., 1990, էջ 295:) Հայերի հատուկենտ ինքնապաշտպանական մարտերը թուրքական իշխանությունները ջանում էին ներկայացնել իբրև համընդհանուր ապստամբություն, սակայն անգամ գերմանացի պաշտոնյաների հաղորդած տվյալներով հաստատվում էր, որ 1915 թ. ընթացքում Օսմանյան կայսրությունում գրանցվել են հայերի այսպես կոչված ապստամբության չորս դեպք՝ Վանում, Շապին-Գարահիսարում, Մուսա լեռում և Ուրֆայում, որոնք ժամանակագրական առումով չեն համընկնում: (Տես Տատրյան Վ., Հայոց ցեղասպանության ժխտման հիմնական փաստարկները. աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն., Եր., 2005, էջ 18:) Դեպքերի միջև ժամանակագրական խզումը նշանակում է, որ նշված վայրերում հայերը դիմել են ինքնապաշտպանության այն պահին, երբ բնաջնջվելու հերթը հասել է իրենց, հակառակ պարագայում հայերն այդ «ապստամբությունը» կկազմակերպեին բոլոր տեղերում միաժամանակ՝ հաջողության ավելի մեծ շանսեր ունենալու նպատակով, թույլ չտալով, որ թուրքերն առանձին-առանձին ճնշեին այդ օջախները:

[5] Ադրբեջանի վարչապետ և արտաքին գործերի նախարար Ֆ. Խան-Խոյսկին ներքին գործերի նախարար Բ. Խան-Ջիվանշիրի հետ դեռևս 1918 թ. սեպտեմբերի 15-17-ին աչքի էր ընկել Բաքվի հազարավոր հայերի կոտորածը և նրանց ունեցվածքը կողոպտելու գործողությունների կազմակերպմամբ: (Տես Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը, էջ 399-400:)

[6] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 284, с. 417.

յունը դնել զոհի վրա:

Նախապատրաստական գործողություններին հաջորդեց Ղարաբաղի հայերին Սուլթանովի ներկայացրած վերջնագիրը, որով պահանջվում էր թույլ տալ թաթարական զորքերի և քրդական հրոսակախմբերի անարգել մուտքը Դիզակի, Վարանդայի և Ջեբրայիլի շրջաններ՝ մերժման դեպքում սպառնալով ռազմական ուժ կիրառել: Մինչ այդ հայերի համար փակվել էր նաև Շուշի-Աղդամ ճանապարհը, և հայ բնակչության նկատմամբ տնտեսական բոյկոտ էր կիրառվում: Լուրեր էին ստացվել, որ Խանքենդիում և Աղդամում մոտ 400 հայեր դաժանաբար սպանվել են թաթարական զորքերի կողմից, իսկ նրանց տները և ունեցվածքը թալանվել են[1]:

1920 թ. փետրվարի 28-ից մարտի 4-ը կայացած՝ Ղարաբաղի հայերի VIII համագումարը, արձանագրելով ադրբեջանական իշխանությունների կողմից ժամանակավոր համաձայնագրի 1-ին, 7-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածների[2] խախտումները, մերժեց Սուլթանովի պահանջը և պատրաստակամություն հայտնեց միջոցներ ձեռնարկելու՝ Ղարաբաղի հայերի կյանքն ու արժանապատվությունը պաշտպանելու հարցում[3]:

Մերժում ստանալուց հետո Բաքուն մարտի 11-ին և 12-ին Ղարաբաղ ուղարկեց զենքով ու զինամթերքով բեռնված 90 վագոն[4]: Մարտի 20-ից մուսավաթական իշխանությունները սկսեցին իրականացնել Ղարաբաղի հայ բնակչության բռնի զինաթափումը[5]: Վստահաբար կարելի է պնդել, որ կոտորելուց առաջ հայկական բնակավայրերը շրջապատելու, արտաքին աշխարհից կտրելու և զինաթափվելու պահանջ ներկայացնելու այս սցենարը[6] Սուլթանովին հուշել էին Շուշիում գտնվող թուրքական բանակի բարձրաստիճան սպաները, որոնք հայերի կոտորածների կազմակերպման մեծ փորձ ունեին:

[1] Նույն տեղում, док. 283, с. 416.

[2] 1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ կողմերի համար պայմանագիրը գործելու էր մինչև Խաղաղության համաժողովում տվյալ հարցի լուծումը, որը հավասարապես պարտադիր պետք է լիներ երկու կողմերի համար, սակայն Սուլթանովի կողմից Ղարաբաղը Ադրբեջանին վերջնականապես ենթարկելու վերջնագիրն այս կետի կոպիտ խախտում էր: Փաստաթղթի 7-րդ հոդվածով ազգամիջյան բնույթի սկզբունքային բոլոր հարցերը նախապես պետք է քննարկվեին գեներալ-նահանգապետին կից երեք հայերից և երեք մահմեդականներից կազմված խորհրդում, ինչից հետո միայն կարող էին կյանքի կոչվել, սակայն Սուլթանովը առանց որևէ քննարկումների Ղարաբաղի հայերին փորձում էր պարտադրել ինչպես զինաթափվելու, այնպես էլ Ադրբեջանին վերջնականապես ենթարկվելու որոշումները: Վերջապես համաձայնագրի 15-րդ հոդվածով միայն Խանքենդիում և Շուշիում պետք է մնային թաթարական սահմանափակ կայազորներ, իսկ 16-րդ հոդվածով Լեռնային Ղարաբաղի հայերով բնակեցված Շուշիի, Ջիվանշիրի և Ջեբրայիլի շրջաններում զորքերի ցանկացած տեղաշարժ կարող էր իրականացվել միայն գեներալ-նահանգապետին կից գործող խորհրդի անդամների 2/3-ի համաձայնությամբ: (Տես Нагорный Карабах в 1918-1923 гг., док. № 214, с. 323-326.) Քաջ գիտակցելով, որ խորհրդի երեք հայ անդամները չէին համաձայնվի, որ Խանքենդիում և Շուշիում լրացուցիչ թաթարական և քրդական ուժեր կենտրոնացնելու և Ղարաբաղի մյուս տարածքներում զորքերի տեղաշարժերի հետ, Սուլթանովը խախտեց նաև համաձայնագրի այս կետերը:

[3] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 257, с. 377-380.

[4] Նույն տեղում, док. 283, с. 416.

[5] Նույն տեղում, док. 268, с. 392.

[6] Մեծ եղեռնի առաջին փուլում հայկական գյուղերը շրջապատվում էին քրդական հրոսակախմբերով կամ «Հատուկ կազմակերպության» («Թեշքիլաթ-ը մահսուսայի») ստորաբաժանումներով, ինչից հետո հայ բնակչությանը մի քանի ժամվա ընթացքում իրենց մոտ եղած բոլոր զենքերը հանձնելու վերջնագիր էր ներկայացվում, հակառակ դեպքում սպառնում էին հողին հավասարեցնել գյուղը: Անգամ զենքերը հանձնելու պարագայում հայ բնակչությունը կոտորվում էր, իսկ բնակավայրը՝ վերածվում ավերակների: (Տես Авакян А. Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений, с. 89.) Զինաթափվելու պահանջը բավարարելու և կոտորածից փրկվելու համար հայերը երբեմն ստիպված վաճառում էին իրենց անասունները, որպեսզի չափազանց բարձր գնով իրենց հարևան թուրքերից, քրդերից և չերքեզներից զենք գնեին և հանձնեին: (Տես Гамелен А., Брон Ж.-М., Восстановленная память, Ер., 1995, с. 27.) Այդուհանդերձ, հայերի կողմից զենքերն անգամ կամավոր հանձնելու հանգամանքը թուրքական իշխանությունների կողմից քարոզչական առումով շահարկվում էր, թե իբր հայերն այդ զենքով մտադիր էին թիկունքից հարվածել օսմանյան բանակին, ուստի զենք և զինամթերք փնտրելու պատրվակով ժանդարմներն ու քրդական հրոսակախմբերն Արևմտյան Հայաստանի բնակավայրերում իրականացնում էին հայ բնակչության զանգվածային կոտորածներն ու նրանց ունեցվածքի թալանը:

Շուշիի հայությանը ևս կարգադրված էր երեք օրվա ընթացքում հատուկ նշանակված տեղերում հոժարակամ հանձնել զենքերը: Քաջ գիտակցելով, որ այդ քայլով փորձ էր կատարվում նոր կոտորածներից առաջ հայերին զրկել ինքնապաշտպանվելու միջոցներից, Ղարաբաղի բնակչությունը վճռականորեն մերժեց զինաթափվելու պահանջը, ինչը նաև 1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագրի 19-րդ հոդվածի խախտում էր[1]: Վերջնագրի ժամկետը լրանալուց հետո՝ մարտի 22-ի առավոտյան, Սուլթանովի հրամանով Ղարաբաղում կենտրոնացած թուրք-թաթարական զորքերը սկսեցին խուզարկություններ իրականացնել Շուշիի հայկական թաղամասում և բռնությամբ զինաթափել բնակչությանը[2]:

Զինաթափման անվան տակ սկսվեց Շուշիի հայերի նոր կոտորածը: Մարտի 23-ին Սուլթանովի և թուրք սպաների ղեկավարությամբ թաթար զինվորները, քրդական հրոսակները և մահմեդական մոլեռանդ ամբոխը ներխուժեցին Շուշիի հայկական թաղամաս, սկսեց կոտորել խաղաղ բնակչությանը՝ չխնայելով անգամ կանանց, ծերերին և երեխաներին: Միայն Շուշիում զոհերի թիվը կազմեց մոտ 8000 մարդ[3]: Շուշիի հայկական թաղամասը գրեթե ամբողջությամբ հրկիզվեց, այրվեցին բնակելի տներն ու հասարակական շինությունները: Մահից փրկված Շուշիի հայության բեկորները, թվով 5-6 հազար մարդ, մազապուրծ փախան Վարանդա և Դիզակ[4]:

Շուշիի կոտորածները «հայերի ապստամբությունը ճնշելու» շինծու վարկածով արդարացնող Ֆ. Խան-Խոյսկին պնդում էր, որ Շուշիում հայ մտավորականության մի մասը իբր գտնվում է Սուլթանովի հովանավորության ներքո, իսկ մյուսները հեռացել են «ապստամբների» հետ[5]: Մինչդեռ Ղարաբաղի և մասնավորապես Շուշիի հայ բնակչության կոտորածների ընթացքում մուսավաթականները Սուլթանովի գլխավորությամբ կրկնօրինակեցին նաև երիտթուրքերի կողմից հայ մտավորականության նկատմամբ առանձնակի դաժանությամբ հաշվեհարդար տեսնելու[6] Մեծ եղեռնի երկրորդ փուլը[7]: Ժամանակակից ցեղասպանագիտության

---

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 214, с. 326.

[2] Նույն տեղում, с. 416.

[3] Նույն տեղում, док. 283, с. 416.

[4] Hovannisian R., The Republic of Armenia. Volume 3, From London to Sèvres, February-August, 1920. Berkeley and Los Angeles: University of California Press, 1996, p. 152.

[5] Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 284, с. 418.

[6] Հայ մտավորականության ոչնչացումը նույնպես թուրքական ցեղասպանական գործելաոճի վառ դրսևորումներից մեկն էր: Հայ մտավորականներին ձերբակալելու ու ոչնչացնելու միջոցով երիտթուրքական իշխանությունները հայերին զրկեցին ազգային ընտրանուց՝ վախենալով, որ վերջինս կարող է ձախողել հայերին բնաջնջելու կառավարության հանցավոր ծրագիրը: 1915 թ. ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերին Կ. Պոլսում և վաղօրոք կազմված ցուցակներով ոստիկանությունը կալանեց 800-ից ավելի հայ մտավորականների (Տես Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ., Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Եր., 1995, էջ 24:), որոնց թվում էին օսմանյան խորհրդարանի պատգամավորներ, բանաստեղծներ, գրողներ, հրապարակախոսներ, և լրագրողներ, գիտնականներ, կուսակցական գործիչներ և հոգևորականներ, որոնք դաժանորեն սպանվեցին տարագրման ճանապարհին: Հայ մտավորականության ոչնչացման գործընթացը տարածվեց նաև Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ այլ տարածքներում՝ ձերբակալված հայ մտավորականների թիվը հասցնելով 2345-ի: (Տես Halacoglu Yu., Die Armenien frage, Klagenfurt-Wien-Ljubljana-Sarajevo, 2006, p. 60.)

[7] Մեծ եղեռնի առաջին փուլում երիտթուրքական իշխանությունները հայ տղամարդկանց զորակոչեցին օսմանյան բանակ և ոչնչացրին՝ զուգահեռաբար իրականացնելով հայկական բնակավայրերի զինաթափման գործընթացը: Այս գործողություններով ցեղասպանության կազմակերպիչները նպատակ էին հետապնդում հայերին սպասվելիք զանգվածային կոտորածներից առաջ զրկել ինքնապաշտպանական ուժից և միջոցներից: Մեծ եղեռնի երկրորդ փուլում նախ մայրաքաղաք Կ.Պոլսում, իսկ այնուհետև կայսրության մյուս բնակավայրերում իրականացվեց հայ մտավորականության ձերբակալման և աքսորի ճանապարհին նրանց ֆիզիկապես ոչնչացնելու գործողությունը: Թուրքական իշխանությունները հայ մտավորականության մեջ վտանգ էին տեսնում, որ նրանք իրենց հեղինակությամբ ու ազդեցությամբ հայ բնակչությանը կարող էին մղել անհնազանդության

մեջ այս հանցավոր գործողություններին տրվել է «պոլիտիցիդ» կամ «քաղաքական սպանություն» անվանումը[1]: Շուշիում զոհվեցին բժիշկ Յարամիշյանը, բանաստեղծներ Մ. Ջանումյանը, Փիրջանյանը, ուսուցիչներ Թավրիզյանը, Տեր-Գաբրիելյանը, գիտության ու մշակույթի այլ ներկայացուցիչներ: Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը կախաղան բարձրացվեց, իսկ Շուշիի ոստիկանապետ Ավետիս Տեր-Ղուկասյանը ողջակիզվեց[2]:

Բնական է, որ Ղարաբաղի ու մասնավորապես Շուշիի հայերի կոտորածների ընթացքում նույնպես պետք է ընդօրինակվեր օսմանահպատակ հայերի բնաջնջման ընթացքում իրականացված հայ բնակչության ունեցվածքի զանգվածային թալանի և ունեզրկման գործընթացը, քանզի ինչպես երիտթուրքերը, այնպես էլ մուսավաթականները հենց հայերի ունեցվածքին տեր դառնալու խթանով էին մուսուլմաններին մասնակից դարձնում այդ հանցագործությանը[3]:

Շուշիի հայկական թաղամասի տները այրելուց առաջ դուրս էին հանում ամբողջ ունեցվածքը, կահ-կարասին, որը թալանի ու կողոպուտի էր ենթարկվում թաթարների և քրդերի կողմից: Ինչ վերաբերում է անշարժ գույքին, ապա հայկական թաղամասում թողնվեց միայն 10-15 տուն, որոնք մուսավաթական իշխանությունները նախատեսել էին թաթարական բանակի կարիքների համար[4]:

Ընդհանուր առմամբ, 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին թուրք սպաների և Սուլթանովի ղեկավարությամբ մուսավաթական բանակը, քրդական հրոսակախմբերն ու մոլեռանդ մուսուլման ամբոխը Ղարաբաղում կոտորեցին մոտ 10 հազար հայերի, ավերեցին ավելի քան երեք տասնյակ գյուղեր ու շեներ: Ջարդերից փրկված շուրջ 25 հազար մարդ ապաստան գտավ Վարանդայի, Դիզակի և մա-

---

և այդպիսով ձախողել իրենց ցեղասպանական ծրագրերը, ուստի հայերին ինքնապաշտպանվելու ուժից և միջոցներից զրկելուց հետո հաջորդ քայլով զրկեցին նաև ինքնակազմակերպվելու հնարավորությունից:

[1] «Պոլիտիցիդը» կամ քաղաքական սպանությունը ցեղասպանության հետ կապված կարող է հանդես գալ երկու ձևով: Մի դեպքում այն կարող է լինել ցեղասպանության հանցագործության տարատեսակ, երբ որևէ հանցավոր վարչակարգ իր քաղաքական հակառակորդների և ընդդիմախոսների նկատմամբ հաշվեհարդար է տեսնում՝ վերջիններիս ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով: Մյուս դեպքում այն հանդես է գալիս որպես ցեղասպանության հանցագործության փուլերից մեկը, երբ հանցավոր վարչակարգը որևէ ռասայական, էթնիկ, կրոնական կամ ազգային խումբը որպես այդպիսին ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացնելուց առաջ նախ ֆիզիկապես վերացնում է տվյալ խմբի ընտրախավին, օրինակ՝ մտավորականությանը, որպեսզի վերջինս իր հեղինակությամբ ու ազդեցությամբ զոհ խմբին չմղի դիմադրության կամ անհնազանդության և այդպիսով չձախողի վերջինիս ցեղասպանելու ծրագիրը: (Տես Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտական հայեցակարգային համակարգում, էջ 14-17:) Ի դեպ, երիտթուրքերին կարելի է մեղադրել պոլիտիցիդի թե՛ առաջին և թե՛ երկրորդ դրսևորման մեջ: Առաջին դեպքում երիտթուրքերը 1913 թ. ֆիզիկապես վերացրին իրենց հակառակորդ քաղաքական ուժի՝ «Ազատություն և համաձայնություն» («Հյուրիեթ վե իթիլաֆ») կուսակցության առաջնորդներին՝ երկրում հաստատելով իրենց միակուսակցական իշխանությունը: (Տես Аванян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, с. 74.) Միակուսակցական համակարգը երիտթուրքերին հնարավորություն տվեց Առաջին աշխարհամարտի ընթացքում կազմակերպելու հայերի ցեղասպանությունը՝ Մեծ եղեռնը, որի երկրորդ փուլը՝ հայ մտավորականության ոչնչացումը, «պոլիտիցիդի» կամ «քաղաքական սպանության» եզրույթի երկրորդ դրսևորումն է:

[2] Hovannisian R., The Republic of Armenia. Volume 3, From London to Sèvres, February-August, 1920, p. 152.

[3] Ցեղասպանությանը զուգահեռ ընթացող հայերի զանգվածային ունեզրկման քաղաքականությանն օրինական տեսք տալու նպատակով ինչպես երիտթուրքական, այնպես էլ հետագայում քեմալական իշխանությունները ստեղծեցին այսպես կոչված «Լքյալ գույքերի մասին» օրենքների մի ամբողջ շարք: Թուրքական իշխանությունների կողմից ձևավորվել էին «Լքյալ գույքերի հանձնաժողովներ», որոնք պետք է աճուրդով վաճառեին հայերի ունեցվածքը, իսկ ստացված գումարները վերադարձնեին սեփականատերերին կամ նրանց ժառանգներին: Այս հանձնաժողովների միջոցով, սակայն, իրականացվեց օսմանահպատակ հայերի ինչպես անշարժ գույքի, այնպես էլ շարժական ունեցվածքի պետականորեն վերահսկվող բռնազավթումը, որին տեր դարձավ ինչպես պետությունը, այնպես էլ մահմեդական բնակչությունը: (Մանրամասն տես Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970:)

[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թթ. 163-164:

սամբ Զանգեզուրի գյուղերում[1]:

Այսպիսով՝ 1919 թ. հունիսին և 1920 թ. մարտին կազմակերպված՝ Շուշիի հայերի կրկնակի ջարդերը Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ իրագործված առանձին հանցագործություններ չէին: Բաքվի հայերի 1918 թ. կոտորածների հետ մեկտեղ դա երիտթուրքերի կողմից ծրագրված ու հետևողականորեն իրագործվող Հայոց ցեղասպանության հանցավոր քաղաքականության դրսևորումներից մեկն էր, որը ադրբեջանական բանակի ստորաբաժանումներն ու քրդական հրոսակախմբերն իրագործեցին թուրքական բանակի բարձրաստիճան սպաների և նրանց հետ համագործակցող Խ. Սուլթանովի ղեկավարությամբ:

Ամփոփում

Մուսավաթական Ադրբեջանի և Օսմանյան կայսրության համագործակցությունը Շուշիի հայ բնակչության կոտորածների կազմակերպման գործում

Արմեն Մարուքյան

1918-ի սեպտեմբերին Բաքվում թուրքական բանակի աջակցությամբ հայերի կոտորածից հետո արհեստականորեն ստեղծված Ադրբեջանի պետության իշխանությունները փորձեցին այդ հանցավոր քաղաքականությունը տարածել նաև Ղարաբաղի հայ բնակչության վրա: Առաջին աշխարհամարտի ավարտին Անդրկովկասում ստեղծված նոր ռազմաքաղաքական իրավիճակը Ադրբեջանի իշխանություններին հույս տվեց, որ թուրքերի ակտիվ աջակցությամբ և բրիտանական զորքերի հրամանատարության լուռ համաձայնությամբ հնարավոր կլինի հպատակեցնել Ղարաբաղի հայ բնակչությանը: Ղարաբաղը ռազմավարական նշանակություն ուներ ինչպես կովկասյան թաթարների, այնպես էլ թուրքերի համար, քանի որ այս տարածաշրջանի, ինչպես նաև Զանգեզուրի և Նախիջևանի բռնագրավման դեպքում նախ՝ ցամաքային կապ կհաստատվեր Ադրբեջանի և Թուրքիայի միջև, և երկրորդ՝ կդրվեին այսպես կոչված Մեծ Ադրբեջանի հիմքերը, որը համարվում էր մտացածին պանթուրքական պետության ՝ Մեծ Թուրանի ստեղծման կարևոր փուլերից մեկը:

Հիմնվելով զանգվածային սպանությունների պլանավորման և կազմակերպման ձևերի և մեթոդների համեմատական վերլուծության, ինչպես նաև այդ հանցագործություններին զոհ դարձած խմբերի հնարավոր ընդդիմության կազմաքանդման վրա՝ այս հրապարակման մեջ համապարփակ ուսումնասիրվում են թուրքական հետքերը Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ 1919-1920 թթ. Ադրբեջանի իշխանությունների իրականացրած ցեղասպանության գործողությունների մեջ: Այս իմաստով շատ կարևոր է բացահայտել թուրք զինվորական ղեկավարների անմիջական մասնակցությունը, որոնք հրահանգում էին կովկասյան թաթարներին և քրդերին իրականացնել Ղարաբաղի հայ բնակչության 1919-1920 թվականների կոտորածները:

Ամփոփելով, կարելի է փաստել, որ 1919-ի հունիսին և 1920-ի մարտին Շուշիի հայերի

[1] «Հառաջ», Թիֆլիս, 20 ապրիլի 1920 թ.:

կրկնվող ջարդերը առանձին հանցագործություններ չէին Ղարաբաղի հայ բնակչության դեմ, այլ 1918 թ. Բաքվի հայերի կոտորածների հետ միասին դարձել էին Հայոց ցեղասպանության հանցավոր քաղաքականության փուլերից մեկը, որը պլանավորել և հետևողականորեն իրականացնում էին երիտթուրքերը: Շուշիի հայերի ջարդերն իրականացնում էին ադրբեջանական բանակի ստորաբաժանումները և քրդական ավազակախմբերը՝ թուրքական բանակի բարձրաստիճան սպաների և նրանց հետ համագործակցող ադրբեջանցի գեներալ- նահանգապետ Խ.Սուլթանովի ղեկավարությամբ:

Հիմնաբառեր. *Շուշիի հայերի ջարդեր, Հայոց ցեղասպանություն, պանթուրքիզմ, Ղարաբաղ, Ադրբեջան, մուսավաթականներ, քրդեր, ժամանակավոր համաձայնագիր, երիտթուրքեր, Թուրքիա, «վիկտիմիզացիա», «պոլիտիցիդ»:*

Резюме

Сотрудничество мусаватисткого Азербайджана и Османской империи в организации погромов армянского населения Шуши

Армен Марукян

После резни армян, Баку в сентябре 1918 г., осуществленной при содействии турецкой армии власти искусственно созданного государства Азербайджан попытались распространить эту преступную политику также на армянское население Карабаха. Сложившаяся в конце Первой мировой войны новая военно-политическая ситуация в Закавказье у властей Азербайджана породила надежду на то, что при активной поддержке турок и молчаливом согласии командования британских войск удастся покорить армянское население Карабаха. Карабах был стратегически важен как для кавказских татар, так и для турок, поскольку в случае оккупации данного региона, а также Зангезура и Нахичевана, во-первых, установилась бы сухопутная связь между Азербайджаном и Турцией, а во-вторых, были бы заложены основы так называемого Великого Азербайджана, что считалось одним из важных этапов создания воображаемого пантюркистского государства Великий Туран.

На основе сравнительного анализа форм и методов планирования и организации массовых убийств, а также дезорганизации возможного противодействия групп, ставших жертвой этих преступлений, в настоящей публикации всесторонне исследуется турецкий след в геноцидных действиях, осуществленных азербайджанскими властями в отношении армянского населения Карабаха в 1919-1920 гг. В этом смысле очень важно раскрытие непосредственного участия турецких военных деятелей, которые инструктировали кавказских татар и курдов при осуществлении массовых убийств армянского населения Карабаха в 1919-1920 гг.

Обобщая можно констатировать, что повторные погромы армян Шуши в июне 1919 и марте 1920 годов были не отдельными преступлениями против армянского населения

Карабаха, а вместе с массовой резней армян Баку 1918 года представляли собой один из этапов преступной политики Геноцида армян, который был запланирован и последовательно проводился младотурками. Погромы армян Шуши были осуществлены подразделениями азербайджанской армии и курдскими бандами под руководством высокопоставленных офицеров турецкой армии и сотрудничающего с ними азербайджанского генерал-губернатор Х. Султанова.

Ключевые слова: *погромы армян Шуши, Геноцид армян, пантюркизм, Карабах, Азербайджан, мусаватисты, курды, временное соглашение, младотурки, Турция, «виктимизация», «политицид».*

Abstract

Cooperation between Musavat Azerbaijan and the Ottoman Empire in Organizing the Massacres of the Armenian Population in Shushi

Armen Marukyan

After the massacre of Armenians in Baku in September 1918 with the support of Turkish army, the authorities of the artificially created state of Azerbaijan tried to spread this criminal policy towards the Armenian population of Karabakh.

At the end of the First World War, the new military-political situation in Transcaucasia gave hope to the Azerbaijani authorities that with the active support of the Turks and with the tacit consent of the British Army headquarters it will be possible to subjugate the Armenian population of Karabakh. Karabakh was of strategic importance to both the Caucasian Tatars and the Turks, as in the case of confiscating this region, as well as Zangezur and Nakhichevan, a land connection would firstly be established between Azerbaijan and Turkey, and secondly the foundations of the so-called Greater Azerbaijan would be laid down, which was one of the important stages of the creation of Greate Turan imaginary state. On the basis of a comparative analysis of the forms and methods of planning and organizing mass killings, as well as the possible disintegration of the opposition groups that fell victim to these crimes, this publication thoroughly explores the Turkish trace of genocide actions perpetrated by the Azerbaijani authorities against the Armenian population of Karabakh in 1919-1920. In this sense, it is very important to reveal the direct participation of Turkish military leaders who instructed the Caucasian Tatars and Kurds to carry out the massacres of the Armenian population of Karabakh in 1919-1920.

In conclusion, it can be stated that the repeated massacres of Armenians of Shushi in June 1919 and in March 1920 were not separate crimes against the Armenian population of Karabakh, but together with the Baku Armenian massacres in 1918 became one of the stages of the criminal policy of Armenian Genocide planned and consistently implemented by the Young Turks. The massacres of the Armenians of Shushi were carried out by the subdivisions of Azerbaijani army,

the Kurdish gangs under the leadership of high-ranking officers of the Turkish army and the Azeri governor-general Kh. Sultanov who was cooperating with them.

Keywords: *Massacres of Shoushi Armenians, Armenian Genocide, Pan-Turkism, Karabakh, Azerbaijan, Musavatists, Kurds, Provisional Agreement, Young Turks, «victimization», «politicid».*